# Զյունաշող

**Մակերես՝** 16.94կմ$^2$

**Բնակչություն՝** 153

Տնային տնտեսությունների թիվը՝ 57: Գյուղ Տաշիրի տարածաշրջանում, Տաշիր քաղաքից 15 կմ հյուսիս-արեւմուտք, մարզկենտրոնից գտնվում է 67 կմ հեռավորության վրա:
Զյունաշող (նախկինում Կզըլշաֆակ,Ղզըլշաֆակ) գյուղը հիմնադրվել է 1870 թվականին, վերաբնակեցվել է 1989թ. Ադրբեջանից բռնագաղթված հայերի կողմից:
Բարձրությունը ծովի մակարդակից 1580 մետր: Կլիման բարեխառն է, ձմեռը երկարատև ու ցրտաշունչ, ամառը՝ զով: Գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 1423,3 հա, որից՝ 426,4 հա վարելահող, 737,2 հա խոտհարք, 236,6 հա արոտ:
Հիմնականում զբաղվում են անասնապահությամբ, արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու:
Համայնքում մասամբ զբաղվում են ցորենի, գարու, կարտոֆիլի և այլ բանջարա-բոստանային կուլտուրաների արտադրությամբ:
Համայնքն ունի դպրոց, մշակույթի տուն,բուժկետ, կապի հանգույց:
Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցի հիմնանորոգումը, գազաֆիկացումը, խմելու ջրագծերի ներքին ցանցի վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքների իրացումը, միջհամայնքային և գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: